

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի
գիտական խորհրդի 18.03.2021թ. նիստի

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 40 (քառասուն) անդամից՝ 27-ը (քսանյոթը)

Նիստին մասնակցում էին՝

1. Մերոբյան Երվանդ Գիտական խորհրդի նախագահ, ռեկտորի ԺՊ
2. Ավետիսյան Նազելի Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ
3. Նիկողոսյան Գագիկ ՇՊՀ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ
4. Մելքոնյան Հովիկ Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
5. Սարգսյան Արմենուհի Գիտական քաղաքականության, որակի ապահովման ու կառավարման կենտրոնի տնօրեն
6. Պետրոսյան Կարինե Գիտական քարտուղար (գիտական խորհրդի քարտուղար)
7. Պողոսյան Բագրատ Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ղեկան
8. Մելիքյան Թամարա Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ղեկան
9. Հովհաննիսյան Օֆելյա Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի ղեկան
10. Մարդոյան Ռուզաննա Մանկավարժության ֆակուլտետի ղեկան
11. Մկրտչյան Արթուր Ռազմական ամբիոնի պետ
12. Դավիդյան Աշոտ ՇՊՀ քոլեջի տնօրեն
13. Դարբինյան Կարեն ՇՊՀ ավագ դպրոցի տնօրեն
14. Խաչատրյան Վալերի ՇՊՀ արհմիության նախագահ

| | | |
|-----|--------------------|--|
| 15. | Մկոյան Արտաշես | Մ.գ.դ, պրոֆեսոր, (անենատարեց դոկտոր) |
| 16. | Սարգսյան Սամվել | ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր |
| 17. | Սարտիրոսան Լևոն | Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչ, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ |
| 18. | Մկրտչյան Արթուր | Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի գործարարության և վարչարարության ամբիոնի վարիչի ԺՊ, տնտ.գ.թ., դոցենտ |
| 19. | Ղուկասյան Լուսիկ | Մանկավարժության ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ |
| 20. | Աղանյան Գևորգ | Մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., |
| 21. | Հովհաննիսյան Արտակ | Մոցիլակական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ |
| 22. | Կուրազյան Օֆելյա | Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի արվեստի ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., ասիստենտ |
| 23. | Տեր-Աղամյան Շուշան | Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., ասիստենտ |
| 24. | Մաթևոսյան Էվելինա | Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., դոցենտ |
| 25. | Համբարյան Ժենյա | Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի |
| 26. | Գալստյան Ամալյա | Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկա մասնագիտության մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի |
| 27. | Սարգսյան Սվետլանա | Ռեզմական ամբիոնի նախնական զինվորական պատրաստություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի |

ՕՐԱԿԱՐԳ

1. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի քոլեջի 2019-2020 ուստարվա գործունեության հաշվետվության մասին

Հաղ.՝ քոլեջի տնօրեն Ա. Դավինյան

2. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ավագ դպրոցի 2019-2020 ուստարվա գործունեության հաշվետվության մասին

Հաղ.՝ ավագ դպրոցի տնօրենի ՊԿ Կ. Դարբինյան

3. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի աշխատակիցների գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման ընթացակարգի լրամշակում

Հաղ.՝ Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյան

4. Հետազոտողի կրթական ծրագրով «Մանկավարժության տեսություն և պատմություն» (դասիչ՝ ԺԳ.00.01) մասնագիտությամբ հայցորդ Լենա Սամվելի Բաղդասարյանի ուսումնառության ժամկետների երկարաձգման, ՇՊՀ-ի Գիտական խորհրդի՝ 2018թ.-ի փետրվարի 12-ի նիստում հաստատված ուսումնահետազոտական աշխատանքների պլանին համապատասխան ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանի փոփոխման և հաստատման մասին

Հաղ.՝ Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյան

5. Հետազոտողի կրթական ծրագրով «Մանկավարժության տեսություն և պատմություն» (դասիչ՝ ԺԳ.00.01) մասնագիտությամբ հայցորդ Լուսինե Հենրիկի Մելիքյանի ուսումնառության ժամկետների երկարաձգման, ՇՊՀ-ի Գիտական խորհրդի՝ 2018թ.-ի փետրվարի 12-ի նիստում հաստատված ուսումնահետազոտական աշխատանքների պլանին համապատասխան ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանի փոփոխման և հաստատման մասին

Հաղ.՝ Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյան

6. ՇՊՀ-ի Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի «Գործարարության և վարչարարության» ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու Հրաչ Լյովայի Խաչատրյանին «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ /ԸՕ. 002 / դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյան

Գիտական խորհրդի նախագահ Ե. Մերոբյանը բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
27 անդամ. կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Օրակարգը հաստատվեց:

1. ԼՍԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի քոլեջի 2019-2020 ուստարվա գործունեության հաշվետվության մասին

Քոլեջի տնօրեն պարոն Դավիդյանը ներկայացրեց 2019-2020 ուստարում ՇՊՀ քոլեջում ընդունելության հետ կապված աշխատանքների և արդյունքների, ուստարում առկա ուսուցմամբ ձևավորված կուրսերի քանակի, մասնագիտությունների, ուսանողների քանակի, այնուհետև նաև դասաբաշխման, դասավանդող և ուսումնաօժանդակ համակազմերի մասին:

Պարոն Դավիդյանը նշեց, որ 2019-2020 ուստարին առանձնահատուկ էր համեմատած մյուս տարիներին, քանի որ համավարակի հետ կապված խաթարվեց ուսումնական գործընթացը, սակայն իրենց կողմից կազմակերպվեց հեռավար ուսուցում, որը փորձություն էր թե՛ քոլեջի դասախոսների և թե՛ ուսանողների համար, քանի որ վերոնշյալի վերաբերյալ կանոնակարգերում որևէ դրույթ չկային: Այնուամենայնիվ հաղթահարված դժվարություններից հետո ուսումնական տարին ավարտվել է, իր խոսքով բավականին լավ ցուցանիշներով, որոնք էլ հակիրճ ներկայացվեց ունկնդիրներին:

Պարոն Դավիդյանը խոսեց նաև քոլեջի ուսումնամեթոդական խորհրդի, ամբիոններում իրականացված աշխատանքի, որակի ապահովման հանձնախմբի և նրա կողմից կատարված աշխատանքների, նաև կարիերայի կենտրոնի աշխատանքների մասին:

Պարոն Դավիդյանն անդրադարձավ նաև հաշվետու ժամանակաշրջանում պրակտիկաների կազմակերպմանն ու անցկացմանը քոլեջում, այնուհետև դաստիարակչական աշխատանքների, գրադարանի, պետական ամփոփիչ ատեստավորման հետ կապված աշխատանքների կազմակերպման և իրականացման գործընթացները ներկայացրեց: Նրա կողմից շեշտվեց, որ ուսումնառությունը քոլեջում ավարտելուց հետո շարունակական կրթություն ստանալու համար ՇՊՀ են դիմել թվով 27 ուսանողներ:

Հաղորդման ավարտին Պարոն Դավիդյանի կողմից ներկայացվեց կատարված աշխատանքների վերաբերյալ իրեց կողմից իրականացված SWOT վերլուծությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Մարտիրոսյանը հարց ուղղեց պարոն Դավիդյանին, թե ո՞րն է քոլեջի համար գլխավոր չլուծված հարցը այսօր, գուցե այն հնարավոր է լուծել:

Պարոն Դավիդյանը նշեց, որ այսօր դա քոլեջի շենքում լսարանների սակավության խնդիրն է, քանի որ իրենք նախատեսում են նոր մասնագիտություններ ավելացնել, ապա սա հետագայում էլ խնդիր կլինի:

Ա. Սարգսյանը նշեց, որ պարոն Դավիդյանի կողմից ներկայացված SWOT վերլուծության մեջ իր կարծիքով «հնարավորություններ» բաժինը վերանայելու անհրաժեշտություն կա, և հարց ուղղեց պարոն Դավիդյանին, որ իրեց կողմից որպես թույլ կողմ նշվել է լեզվաիմացության խնդիրը, ո՞ր լեզուների մասին է խոսքը և եթե դա լուծվի, ինչպիսի՞ հնարավորություններ կունենան ուսանողներն ու դասախոսները:

Պարոն Դավիդյանը պատասխանեց, քանի որ իրենք ունեն շուկայագիտություն, զբոսաշրջություն մասնագիտություններ և եթե ուսանողները կոնկրետ անցկերենին կամ

ուսերենին լավ տիրապետեն, ավելի արդյունավետ կլինի նրանց հետագա աշխատանքային գործունեությունը:

Պարոն Վ. Խաչատրյանի կարծիքով այսօր մեր երկրում վերջին իրադարձություններով պայմանավորված շատ բան է փոխվել, արդ՞ոք ժամանակը չէ, որ քոլեջում և դպրոցում փոխվեն նաև ուսումնական ծրագրերը, այսինքն դրանք համապատասխանեն մեր երկրի կրթության անհրաժեշտ այսօրվա պահանջներին: Ապա շարունակեց, որ իր կարծիքով այսօր երկրի պահանջներից դուրս գալով շատ մասնագիտություններ պետք է փոփոխվեն:

Պարոն Մերոբյանը արձագանքեց, որ պարոն Խաչատրյանի հարցադրման հիմքում հետազոտություն, հստակ ուսումնասիրություններ կան, թե դա ընդամենը կարծիք է և հատկապես ինչպե՞ս է պարոն Խաչատրյանը ուզում փոխել մասնագիտությունները, ապա շարունակեց, որ իր կարծիքով արտահայտվածը ընդամենը մտահոգ մտավորակականի մտորում է և բնագիտական մասնագիտությունները ոչ թե ինչ որ մեկի նախաձեռնությամբ փակվում են, այլ մասնագիտության գծով դիմորդների թիվն է սակավ: Այնուհետև նշեց, որ սա համապետական լուրջ խնդիր է, ուստի պարոն Դավիդյանի համար դժվար է այս հարցին հստակ պատասխանել:

Պարոն Դավիդյանը ներկայացրեց որոշման նախագիծը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի քոլեջի 2019-2020 ուստարվա գործունեության հաշվետվությունը գնահատել բավարար և առաջարկված որոշման նախագիծն ընդունել հիմք արված առաջարկություններով հանդերձ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

27 անդամ. կողմ՝ 27 , դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ավագ դպրոցի 2019-2020 ուստարվա գործունեության հաշվետվության մասին

Պարոն Դարբինյանը ներկայացրեց ընդհանուր տվյալներ սովորողների, ուսուցիչների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 1 ուստարվա համար, տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 1 ուստարվա համար, տվյալներ ուսումնական հաստատության ղեկավար և վարչական կազմի վերաբերյալ, տվյալներ ուսումնական հաստատության շենքի ջեռուցման պայմանների մասին, այնուհետև ներկայացվեցին տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ նախորդ ուսումնական տարում, 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ, 12-րդ, դասարաններում պետական ավարտական քննությունների արդյունքների փոփոխության դինամիկայի վերաբերյալ, սովորողների առաջադիմության վերաբերյալ տվյալ և նախորդ 1 ուստարվա համար՝ ըստ կրթական աստիճանների, մարզային, հանրապետական, միջազգային առարկայական օլիմպիադաներում ու մարզական, մշակութի ոլորտում ստեղծագործական և կատարողական մրցույթներին սովորողների մասնակցության վերաբերյալ, հաստատության գրադարանի և դրա գործունեության մասին, հաստատության ուսումնական լաբորատորիաների, կաբինետների և դահլիճների վերաբերյալ, ներկայացվեց նաև հաստատությունում ներառական կրթության իրականացմանը վերաբերող չափանիշներ:

Հաշվետվության ավարտին պարոն Դարբինյանը ներկայացրեց աշխատակազմի գործունեության ուժեղ և թույլ կողմերի վերլուծությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ա. Սարգսյանի կարծիքով ավագ դպրոցը որպես ՇՊՀ-ի դպրոց իր մեծագույն խնդիրը պետք է համարի նաև համալսարանի ուսանողական կազմի համալրման գործընթացը, այս առումով շատ անելիքներ կան դպրոցի կողմից, հատկապես բնագիտական առարկաների և դրանց մասնագիտությունների հետ կապված, այնուհետև հարց ուղղեց պարոն Դարբինյանին, որ լսելով նրա հաշվետվությունը, կարգապահության խնդիր վերհանվեց, կարգապահական ի՞նչ խնդրի մասին է գնում խոսքը և ինչպե՞ս են դպրոցում պատրաստվում լուծել այդ խնդիրը:

Պարոն Դարբինյանը պատասխանեց, որ իր բարձրացրած հարցը ուղղակի կարգապահական խնդիրներին է առնչվում և իր կարծիքով, դա պայմանավորված է նրանով, որ ավագ դպրոցը համալրվում է տարբեր դպրոցների աշակերտներով, ուստի մինչև դպրոցի կարգապահությանը ադապտացվում են, կարգապահական խնդիրներ առաջանում են, իհարկե դաստիարակչական աշխատանքներ տարվում են, որ ուսումնական գործընթացը չտուժի:

Ա. Սարգսյանը հարց ուղղեց պարոն Դարբինյանին, որ ելույթում շեշտվեց դպրոցում կիրառվող ուսուցման ժամանակակից մեթոդների ոչ ամենօրյա կիրառման մասին, որը համարվում է թույլ կողմ, ինչպե՞ս դա կմեկնաբանի պարոն Դարբինյանը:

Պարոն Դարբինյանը պատասխանեց, որ այժմ արդիական է ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը ուսումնական գործընթացում, չնայած ավանդական մեթոդներով դասերի վարումն էլ արդիական է, սակայն աշակերտներին ավելի հետաքրքիր է, երբ փոփոխվում է մեթոդաբանությունը և ժամանակակից մեթոդներով դասերի վարման դեպքում աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսին ավելի լայն է, ուստի դպրոցում ուշադրության կենտրոնում է այս հարցը:

Ա. Սարգսյանն ասաց, որ միևնույն է /ոչ ամենօրյա կիրառում/ ձևակերպման հետ ինքը համաձայն չէ:

Պարոն Մերոբյանը նշեց, որ հաշվետվության մեջ բացի ներկայացված թվերից պետք է լինեն նաև վերլուծություններ, այնուհետև հարց ուղղեց պարոն Դարբինյանին, որ հաշվետվության մեջ ներկայացվեց աշակերտների գնահատականների երկու տարիների համեմատական աճը, դա փաստացի գիտելիքների աճի, թե՞ այլ գործոնների արդյունք են, այսինքն դրանք ինչպե՞ս կհիմնավորի պարոն Դարբինյանը:

Պարոն Դարբինյանը պատասխանեց, որ աճը պայմանավորված է այդ տարիների աշակերտների անձնական հատկանիշների հետ:

Պարոն Մերոբյանը ևս մեկ հարց բարձրացրեց, որ հաշվետվությունից երևում է, որ ուսուցիչների տարրակարգի հետ կապված դրական դինամիկա կարծես թե չկա, ինչո՞վ է դա պայմանավորված:

Պարոն Դարբինյանը նշեց, որ վերջերս մեկ ուսուցիչ ևս ստացել է տարրակարգ, սակայն ինքն իր սուբյեկտիվ կարծիքն ունի այս հարցի վերաբերյալ:

Պարոն Մերոբյանը գիտական խորհրդի անդամներին ներկայացրեց, որ ՇՊՀ- ի ավագ դպրոցի սպորտդահլիճը վերանորոգվում է և դպրոցը համալրվել է նաև 4 նոր լաբորատորիաներով:

Պարոն Վ. Խաչատրյանի կարծիքով հաշվետվությամբ պետք է ներկայացվի ոչ թե արածի, այլ ինչ չի արվել և ընդհանրապես ավագ դպրոցը որպես այդպիսին իր առաքելությունը կատարում է, թե ոչ:

Պարոն Մերոբյանը արձագանքեց, որ ավագ դպրոցի առաքելության հետ կապված հարցը կոնֆերանսի նյութ կարող է լինել:

Պարոն Դարբինյանը ներկայացրեց, որ սեպտեմբեր ամսին ուսուցիչների համար վերապատրաստումներ են նախատեսված որակի բարձրացման նպատակով, որը ուղղակի առնչվում է նաև ուսուցիչների աշխատավարձի հետ, այսինքն ով հաղթահարեց առեստավորման քննությունները, կունենա աշխատավարձի բարձրացում:

Պարոն Դարբինյանը ներկայացրեց որոշման նախագիծը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ավագ դպրոցի 2019-2020 ուստարվա գործունեության հաշվետվությունը գնահատել բավարար և առաջարկված որոշման նախագիծն ընդունել հիմք՝ արված առաջարկություններով հանդերձ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

27 անդամ. կողմ՝ 27 , դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. ԼՄԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի աշխատակիցների գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման ընթացակարգի լրամշակում

Ս. Սարգսյանի կողմից ներկայացվեց, որ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի աշխատակիցների գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման ընթացակարգում նախատեսված փոփոխությունները կատարվել են համապատասխան հանձնաժողովի կողմից ընթացակարգի հետ կապված հարցերի քննարկումների արդյունքում, ունեն համապատասխան արձանագրությունները, ուստի վերջիններս էլեկտրոնային նամակի միջոցով ներկայացվել է գիտական խորհրդի անդամներին:

Տիկին Սարգսյանը նշեց, որ մեկ այլ փոփոխություն էլ կապված է հավելվածների տրամադրմանը, որտեղ նկատի պետք է ունենալ այն հանգամանքը, որ տպագրվող ամսագրում այսուհետ նշվելու է աշխատակցի աշխատավայրը, այսինքն՝ ՇՊՀ, միաժամանակ այս մոտեցումը տարածվելու է նաև գրախոսության վրա, այսինքն նշելու է, որ գրախոսությունը կատարվել է ՇՊՀ-ի տվյալ դասախոսի կողմից: Տիկին Սարգսյանը մանրամասն ներկայացրեց նաև ընթացակարգի հավելվածներում կատարված փոփոխությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Աշխատակիցների գիտահետազոտական եվ գիտամեթոդական աշխատանքների խթանման ընթացակարգ»-ի լրամշակված տարբերակը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

27 անդամ. կողմ՝ 27 , դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4. ԼՄԵՑԻՆ՝

Հետազոտողի կրթական ծրագրով «Մանկավարժության տեսություն և պատմություն» (դասիչ՝ ԺԳ.00.01) մասնագիտությամբ հայցող Լենա Սամվելի Բաղդասարյանի ուսումնառության ժամկետների երկարաձգման, ՇՊՀ-ի Գիտական խորհրդի՝ 2018թ.-ի փետրվարի 12-ի նիստում հաստատված ուսումնահետազոտական աշխատանքների պլանին համապատասխան ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանի փոփոխման և հաստատման մասին

Ա. Սարգսյանի կողմից ներկայացվեց, որ հետազոտողի կրթական ծրագրով «Մանկավարժության տեսություն և պատմություն» (դասիչ՝ ԺԳ.00.01) մասնագիտությամբ հայցորդներ Լուսինե Հենրիկի Մելիքյանի և Լենա Սամվելի Բաղդասարյանի ուսումնառության ժամկետները նախատեսված են եղել 3 տարիների համար, սակայն տարբեր պատճառներով նրանք չեն հասցրել պլանավորումը կատարել նախատեսված ժամանակահատվածում: Հարցը քննարկվել է համապատասխան ամբիոնում և այժմ ներկայացվում է գիտական խորհրդին՝ հնարավորություն ընձեռնելու երկարաձգել ուսումնառության ժամկետները:

Տիկին Սարգսյանի կողմից նշվեց, որ գիտական խորհրդի անդամներին է ներկայացվել նաև հայցորդների երկարաձգված ժամանակահատվածի ուսումնառության հետազոտական աշխատանքների անհատական պլանները՝ հաստատման համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Երկարաձգել հետազոտողի կրթական ծրագրով «Մանկավարժության տեսություն և պատմություն» (դասիչ՝ ԺԳ.00.01) մասնագիտությամբ հայցորդ Լենա Սամվելի Բաղդասարյանի ուսումնառության ժամկետները և հաստատել ՇՊՀ-ի գիտական խորհրդի՝ 2018թ.-ի փետրվարի 12-ի նիստում հաստատված ուսումնառության հետազոտական աշխատանքների պլանին համապատասխան ուսումնառության հետազոտական աշխատանքների անհատական պլանը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

27 անդամ. կողմ՝ 27 , դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

5. ԼՍԵՑԻՆ՝

Հետազոտողի կրթական ծրագրով «Մանկավարժության տեսություն և պատմություն» (դասիչ՝ ԺԳ.00.01) մասնագիտությամբ հայցորդ Լուսինե Հենրիկի Մելիքյանի ուսումնառության ժամկետների երկարաձգման, ՇՊՀ-ի գիտական խորհրդի՝ 2018թ.-ի փետրվարի 12-ի նիստում հաստատված ուսումնառության հետազոտական աշխատանքների պլանին համապատասխան ուսումնառության հետազոտական աշխատանքների անհատական պլանի փոփոխման և հաստատման մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Երկարաձգել հետազոտողի կրթական ծրագրով «Մանկավարժության տեսություն և պատմություն» (դասիչ՝ ԺԳ.00.01) մասնագիտությամբ հայցորդ Լուսինե Հենրիկի Մելիքյանի ուսումնառության ժամկետները և հաստատել ՇՊՀ-ի գիտական խորհրդի՝ 2018թ.-ի փետրվարի 12-ի նիստում հաստատված ուսումնառության հետազոտական աշխատանքների պլանին համապատասխան ուսումնառության հետազոտական աշխատանքների անհատական պլանը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

27 անդամ. կողմ՝ 27 , դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6. ԼՄԵՑԻՆ՝

ՇՊՀ-ի Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի «Գործարարության և վարչարարության» ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու Հրաչ Լյովայի Խաչատրյանին «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ /ԸՕ. 002 / դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին

Ա. Սարգսյանը ներկայացրեց դոցենտի գիտական կոչում հայցող հավակնորդին::

Պարոն Սերոբյանը առաջարկ ստացավ հարցը դնել փակ գաղտնի քվեարկության:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

27 անդամ. կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Դոցենտի գիտական կոչման հավակնորդ՝

| № | Անուն, հայրանուն, ազգանուն | Ամբիոն, ձևայնացված կարգավիճակ | Գիտության բնագավառ, մասնագիտություն, թվանիշ |
|---|----------------------------|---|---|
| 1 | Հրաչ Խաչատրյան | 2.«Գործարարություն և վարչարարություն» ամբիոնի՝ ասիստենտ | ԸՕ.002-Տնտեսագիտություն |

Գիտական կոչում շնորհելու մասին որոշում կայացնելու համար անցկացված փակ գաղտնի քվեարկություն կազմակերպելու համար ընտրվեց 3 հոգուց բաղկացած հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Հովիկ Մելքոնյան (նախագահ), Խաչատրյան Թերեզա և ուսանողներից՝ Ամալյա Գալստյան: Քվեարկության անցկացումից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Հ. Մելքոնյանը ներկայացրեց հետևյալ արդյունքները.

| № | Ազգանուն, անուն, հայրանուն | Կողմ | Դեմ | Անվավեր |
|----|----------------------------|------|-----|---------|
| 1. | Հրաչ Խաչատրյան | 26 | 0 | 1 |

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաշվի առնելով, որ Հրաչ Լյովայի Խաչատրյանի ներկայացրած գործը լիովին համապատասխանում է ՀՀ կառավարության 09.07.2001թ. հ. 615 որոշմամբ հաստատված ՀՀ-ում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի՝ դոցենտի գիտական կոչման համար սահմանված պահանջներին (5բ), ՇՊՀ գիտական խորհրդի նիստում անցկացված փակ գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա (քվեարկել են 27-ը. կողմ՝ 26, դեմ՝ 0, անվավեր՝ 1) Հրաչ Լյովայի Խաչատրյանին շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ԸՕ.002– «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ և միջնորդել ՀՀ ԲՈԿ՝ հաստատելու այդ որոշումը և ամրագրելու համապատասխան դիպլոմով:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝ 27 անդամ. կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1. Գիտական խորհրդի նախագահ, ռեկտորի ԺՊ

Սերոբյան Երվանդ

2. Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ

Ավետիսյան Նազելի

3. ՇՊՀ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ

Եփրոսյան Գագիկ

4. Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն

Մելքոնյան Հովիկ

5. Գիտական քաղաքականության, որակի ապահովման ու կառավարման կենտրոնի տնօրեն

Սարգսյան Արմենուհի

6. Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն

Խաչատրյան Թերեզա

7. Գիտական քարտուղար (գիտական խորհրդի քարտուղար)

Պետրոսյան Կարինե

8. Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ղեկան

Պողոսյան Բագրատ

9. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ղեկան

Մելիքյան Թամարա

10. Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի ղեկան

Հովհաննիսյան Օֆելյա

11. Մանկավարժության ֆակուլտետի ղեկան

Մարդոյան Ռուզաննա

12. Ռազմական ամբիոնի պետ

Սկրտչյան Արթուր

13. ՇՊՀ քոլեջի տնօրեն

Դավինյան Աշոտ

14. ՇՊՀ ավագ դպրոցի տնօրեն

Դարբինյան Կարեն

15. ՇՊՀ արհմիության նախագահ

Խաչատրյան Վալերի

16. Պատմ.գիտ.դոկտոր
(ամենաերիտասարդ դոկտոր)

Խորիկյան Հովհաննես

17. Մ.գ.դ, պրոֆեսոր, (ամենատարեց
դոկտոր)

Մկոյան Արտաշես

18. Մ.գ.դ, պրոֆեսոր, (ամենաերիտասարդ
դոկտոր)

Սողոյան Սպարտակ

19. ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ.
գիտությունների դոկտոր,
մաթեմատիկայի, ֆիզիկայի
և տեղեկատվական տեխնոլոգիաների
ամբիոնի պրոֆեսոր

Սարգսյան Սամվել

20. Աշխարհագրության, կենսաբանության և
քիմիայի ամբիոնի վարիչ,
աշխարհագրական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Մարտիրոսյան Լևոն

21. Բնագիտամաթեմատիկական
ֆակուլտետի գործարարության և
վարչարարության ամբիոնի
վարիչի ԺՊ, տնտ.գ.թ., դոցենտ

Մկրտչյան Արթուր

22. Մանկավարժության ֆակուլտետի
մանկավարժության ամբիոնի վարիչի
ԺՊ, մ.գ.թ., դոցենտ

Ղուկասյան Լուսին

23. Մանկավարժության ֆակուլտետի
ֆիզիկական դաստիարակության
տեսության և մեթոդիկայի ամբիոնի
վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ

Աղանյան Գևորգ

24. Սոցիալական գիտությունների և
իրավունքի ֆակուլտետի
իրավագիտության և քաղաքագիտության
ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ





Հովհաննիսյան Արտակ

25. Սոցիալական գիտությունների և
իրավունքի ֆակուլտետի հոգեբանության
ամբիոնի վարիչի ԺՊ, հոգ.գ.թ., դոցենտ

Սահակյան Կարինե

26. Հումանիտար գիտությունների և
արվեստի ֆակուլտետի անգլերեն լեզվի և
գրականության ամբիոնի վարիչ, բան.
գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հովհաննիսյան Անահիտ

27. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի ղոցենտ, բան. գիտ. դոկտոր — Հայրապետյան Սերգո
28. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի արվեստի ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., ասիստենտ Կուրազյան Օֆելյա
29. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., ասիստենտ  Տեր-Աղամյան Շուշան
30. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., ղոցենտ  Մաթևոսյան Էվելինա
31. Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի  Համբարյան Ժենյա
32. Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի — Հովհաննիսյան Յուլյանա
33. Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկա մասնագիտության մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի  Գալստյան Ամալյա
34. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի — Վիրաբյան Ալլա
35. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրակ. Մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի — Մուրազյան Վարդուհի

36. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրակ. Մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի

Աթոյան Շուշաննա

37. Մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող

Խաչատրյան Կարեն

38. Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի պատմության մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող

Աթոյան Արսյոմ

39. Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի սոցիոլոգիա մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի

Հովհաննիսյան Հռիփսիմե

40. Ռազմական ամբիոնի նախնական զինվորական պատրաստություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի

Սարգսյան Սվետլանա